ՍԻՕՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻԱՄԵԱՅ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1867



ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ · ԹԻՒ 11·

ՍԻՕՆ

ՆՈՅԵՄԲԵՐ 30· 1867·

ԱՄՍԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ· ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ՄԱՐՄՆԱՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՔՆ, ԵՒ ԻՐԱՐՈՒ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՍԵՐՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔԸ:

(Շարունակութիւն. տես Թիւ 10):

Բ.

Այսպէս ուրեմն հոգեւոր և մարմնաւոր իշխանութիւնք այն աստիճան իրարու հետ սերտ կապակցեալ են, և իրենց անհատական պարտաւորութիւններն այնքան իրարու հետ վերաբերութիւն ունին, մինչեւ ըսել թէ՝ մարմնաւոր իշխանութիւնն առանց հոգեւորին անկենդան մարմին մի է, որ իւր կենդանի տարերքը հոգեւորէն կ'ընդունի, և նորա միջոցաւ կը մերձենայ Աստուծոյ, յորմէ է ամենայն իշխանութիւնք և թագաւորութիւնք: Իսկ հոգեւոր իշխանութիւնն եւս իւր աճումն ու զարգացումը կ'ընդունի մարմնաւորէն, և գրեթէ նոյնը կը մարմնաւորէ:

Տեսանք առաջին մասին մէջ այն երկու իշխանութեանց յարաբերութեան խզելէն յառաջ եկած զեղծմունքն ու հերձուածն Քրիստոսի եկեղեցւոյ մէջ: Նոյն դարձեալ այն չարեաց առաջքն առնելու համար երկու իշխանութեանց չարաչար կերպիւ և հակառակ աւետարանական ոգւոյն միակ

ռնձի վերայ կեդրոնացնելը, որոց ա-ղետալի հետեւանքներն իբր ի պատ-կերի կը նկատեն մեր աչքերն այսօրուայ օրս Խաղէից մէջ, որոյ տեսարան եղած է պահլաւական ազգութիւնը, որ ինչպէս ըսինք, երկու տարբեր նպատակ ունե-ցող իշխանութիւն կրպար հետ չփո-թելով՝ գայթակղութեան օրինակ ե-ղած էր միամիտ հասարակութեան, երբ կը տեսնէր սուրբ Գէորգի տեղապա-հին մի ձեռքը խաչ և միւս ձեռքը սուր, զոր Քրիստոս պատուիրած էր պատեանին մէջ դնելու ։

Մենք մեր ազգին հոգեւոր և մար-մնաւոր իշխանութեանց գալով, կը տեսնենք որ ի սկզբանէ անոր քրիստո-նէութեան՝ մինչեւ ցխախման վերջին հարստութեան Կիլիկիոյ, երկու այլ և այլ անձանց ձեռօք կառավարուած է ազգն ու եկեղեցին. բայց միշտ ի-րարու հետ հաշտ և մերձաւոր յարա-բերութիւններ պահելով, այնչափ որ՝ երբ մարմնաւոր իշխանութիւնն ար-տաքին թշնամեաց յարձակումներէն տկարացեալ իւր աթոռը տեղափոխած է, նորա հետեւած է և եկեղեցւոյ գլու-խը ։ Արշակունեաց և մարզպանաց ժամանակ ի Վաղարշապատ, յետոյ ի Դուին ։ Բագրատունեաց ժամանակ ի Վասպուրական, ի Ձորոյ վանք, ի Վարագ, և ապա յԱնի. նոյն Բագ-րատունեաց հարստութեան վերջին թագաւոր Գագիկին թափառական կենաց հետ կաթողիկոսական աթոռն ևս կը թափառի երբեմն ի Ծամըն-դաւ, երբեմն ի Հոնի ։ Ռուբինեանց հարստութեան սկսեալուն կը փոխա-դրի ի Սեաւ լեռ, ի Ծովք, ի Հռոմ-կլայ, վերջապէս ի Սիս, ուր Լեւոն Բ. ի թագաւորական թագ ընդունելուն՝ Սիս նշանաւոր քաղաքի կերպարանք տուած էր, ուր գնաց միացաւ հասաւ յետոյ և կաթողիկոսական աթոռը ։

Երբ Ռուբինեանց իշխանութիւն վախ-ճան առաւ, Սսոյ աթոռը թշնամեաց երեսէն անհանգիստ մնալով, և ազ-գային կնիք ու դրոշմ ունեցող աթոռու-թիւնք Հայաստանէն բոլորովին վերա-նալով, գրեթէ եկեղեցական իշխա-նութիւնն ևս բարոյապէս մեռածի պէս եղաւ ։ Ինքն իւր նեցուկն և պաշտ-պանն կորուսելով յանձն վերջին Լե-ւոնի, կորոյս միանգամայն և իւր ազ-դեցութիւնը. եկեղեցին ինկաւ ան-շքութեան մէջ, կաթողիկոսն մոռա-ցաւ իւր նուիրական պարտաւորու-թիւնքը, թողուց զիւր հօտն և կը թափառէր աստ և անդ, և իւր հայ-րապետական գաւազանն յափշտակո-ղաց ձեռքը կը մնայր ։ Մանաւանդ խիկ ասել, եկեղեցւոյ նաւը իւր նա-ւապետէն (թագաւորէն) զրկուած, և իւր ղեկավարէն (կաթողիկոսէն) անկարող ձեռքը մնացուած՝ ալէկո-ծեալ կը ծփայր ։ Այն չարեաց առաջքն առնելու համար բուն Հայաստանի հոգեւոր առաջնորդք յԷջմիածին ժո-ղովելով կ'որոշեն միաբանութեամբ փո-խադրել սրբոյն Գրիգորի աթոռը, և կը յանձնեն հայրապետութիւնն Կի-րակոս Վիրապեցւոյն, որոյ յաջորդե-լով մինչև ցայսօր կը տեւէ նախնական սուրբ և առաքելական Աթոռը ։

Արդ՝ մինչեւ ցաստ մեր ըսածներէն երկու բան կը մակաբերեմք ։ Առաջին երկու իշխանութեանց իրարու հետ ունեցած յարաբերութիւնն՝ իբր եր-կու էութիւն ի միոյ աղբերէ յԱստու-ծոյ դոյացեալ, ըստ այնմ “Ամենայն իշ-խանութիւն յԱստուծոյ է” ։ Երկրորդ՝ մարմնաւոր իշխանութեան հոգեւորին վերայ ունեցած արտաքին ազդեցու-թիւնն ի նպաստ նորա զարգացմանն և ընդարձակութեան՝ թէ բարոյական մա-սին և թէ նիւթականին, առանց մի-ջամտելու լինելոյ նորա ներքին և սրբա-

վան հանդամանայն ։ Առաջնոյն վերայ բառ բաւականին խօսեցած լինելով, կը մնայ մեզ համառօտ տեսութեամբ մի բացատրել վերջինը ։

Գ.

Աշխարհիս մէջ մարդկային ազգի վարած ծառայութեանց և պաշտօնից մէջ կայ պաշտօն մի՝ որ նուիրական և սրբազան կը կոչուի․ և այն պաշտամունքը նա ինքն Աստուած յատկացեալ ձեռքերու յանձնած է այն ժամանակէն ի վեր՝ յորում սինէական լերան վերայ խորհրդաւոր կրօն մի կերպարէս ստեղծուեցաւ ։ Նոյն կրօնին արտաքին արարողութեանց հանդամանքներն ու ծէսերն այն աստիճան նուիրական էին, որուն երբ Ոզիա յանդգնեցաւ նորա դպչիլ և սեղանոյն մերձենալով նոյն կրօնին պաշտօնէից մէկ գործը կատարել, անդէն իսկ և իսկ իւր յանդգնութեան պատիժն ընդունեցաւ ։ Ուստի Աստուած որչափ որ իւր սրբազան պաշտօնին կամ կրօնի էական հանդամանաց դպչողին նախանձաւոր է և վրէժխնդիր, սակայն արտաքին կամ աշխարհական անձանց ևս կը թոյլատրէ որ իւր անուան սեղան կանգնեն ու զարդարեն, ինչպէս եղան երբեմն Բեսելիէլ, Սողոմոն արքայն և այլք բազումք ։ Ուստի յայտնի է որ կրօնական խորհրդոց կամ եկեղեցական իշխանութեանց բնաւ ամենևին աշխարհական ոք թէև թագաւոր՝ արտօնութիւն չունի միջամտելու, սակայն պատուաւորութիւն ունի եկեղեցական իշխանութեան նպաստելու և ժողովրդոց մէջ կրօնական զգացմանքներն և բարեպաշտութեան ոգին զօրացնելու, ինչպէս ըրին Իսրայէլացւոց ժամանակ Ասա և նորա որդին Յովսափատ, Եզեկիա, Յովսիա և ուրիշ շատերն ։ Այսպէս էին և քրիստոնէութեան ժամանակ մեծն Կոստանդիանոս, Տրդատ, Թէոդոս, Աշոտ Ողորմած, Հեթում և այլք ։ Ասոնք լաւ ճանաչեցին իրենց պարտաւորութիւններն և իրենց ժամանակի եկեղեցւոյ հայրապետաց կամ կաթուղիկոսաց նեցուկ և օգնական եղան, քրիստոնէութիւնը ծաղկելուն և ժողովրդոց մէջ հոգևոր և բարոյական յառաջադիմութեանց համար հաստատութիւններ հիմնեցին․ և ժողովուրդն ևս ըստ իւր կարի նոցա ջանիցը կը համապատասխանէր աւետարանական հեզութեամբ և հպատակութեամբ ։ Թագաւորութիւնը վերնալէն յետոյ դարձեալ նոցա ոգին կը նշմարուի տեղ տեղ գտնուած փօլշմաշօրներու, չալըփարներու, և ամիրաներու վերայ, որոնք միշտ պաշտպան կեցած են եկեղեցւոյ անաղարտութեան և նորա Գլխոյն բացարձակ իրաւասութեան, ջանացեր են աւելել նպաստել նիւթապէս եկեղեցեաց և վանորէից զարդացման՝ քան թէ վնասել անոնց յափշտակութեամբք և կեղեքմանօք ։

Իսկ երբ յիշեալ գլխաւոր և երևելի անձանց մօտ չմնայ նախկին ազդեցութիւնն, ուսկէ շատ բարիքներ ծագած լինին պատմութիւնք կը վկայեն, և մարդկային ընկերական վիճակին մէջ հաւասարութիւն տիրեց, և հանճարն ու բնածին տաղանդները քան նիւթական հարստութիւն նախապատիւ լինելու արժանիքն զգալի եղաւ, և կերպով մի բուն իսկ մարդկութիւնը և նորա բանականութեան դրոշմ եղող կրօնն իւր արժանաւորութիւնն գտածի պէս ցուցուեցաւ շնորհիւ ազգային Սահմանադրութեան, այսու ամենայնիւ ցաւալի է միանգամայն խոստովանիլ՝ որ յիշեալ փափաքելի կանոնադրոյն ծնունդ առած ժամանակ, բը-

նութիւնը տեսակ մի մարդկեղէն հրէշներ եւս ծնաւ, ինչպէս որ ծարաւր է նա ցորենի հետ որոմ եւ վարդի քով փուշ գոյացընել, կամ ընկուզին քաղցըր ու կաթնամած հիւթը լեղի ու կործըր կեղեւներով պատել: Այսպէս եղան ցեղ մի երիտասարդներ, որոնք ուսումնական ասպարէզէ դուրս ցատքելով եւ կարգաւոր հրահանգներէ բոլորովին զուրկ, եւ իրենց բարեպաշտօն հարցն ու հաւատը աւանդական կրօնաւորութենէ եւ ողջամտութենէ մերկացեալ, ձեռներէց եղան եկեղեցական իրաւասութեան, մինչեւ եկեղեցւոյ պաշտելի խորհրդոց եղծման եւ փոփոխութեան յանդգնեցան, որում եւ ոչ աստուածատէր թագաւորք համարձակեր էին: Այսպէս երբ ազգային աշխարհական թագը թշնամեաց ոտից կոխան լինելով՝ անպաշտպան մնաց եկեղեցին, խումբ մի երիտասարդք յարձակեցան նորա վերայ, որպէս զի հեղեւոր իշխանութեան ձեռքը մնացած միակ ազգային դրօշմն ալ եղծանելով, խապառ ջնջեն զեկեղեցին, որ թերեւս իրենց կրից եւ միտմանց ներհակ կը թուի եւ իրենց խղճին դաղանի յանդիմանիչ ու վրէժխնդիր:

Երբ ասոնց առաջին նպատակը, եկեղեցւոյ բուն հիմունքն խախտելու ջանքը չյաջողեցաւ, ձեռք առին անուհետեւ նորա հաւատոյ անդամները քարկոծել, նոցա վարուցն ու բարուց վերայ զզուելի ժողովուրդը դայթակղեցընել, եւ մի յանցաւորի եւ իբրեւ մարդ պակասաւոր կղերի մի հետ հարիւրաւորներ եւս զոհել եւ յանպատւութիւն դատապարտել: Եւ բայց ճըշմարտութիւնս ստուգելու համար յանուանէ կ'ուզեմ ցոյց տալ մէկ հանդիսի մի բրած ուխտը, այսինքն ոչ ուտել եւ ոչ ըմպել մինչեւ ազգային կղերականութիւնն սպաննել: Զմիւնիոյ Օսաղիկ անուն Հանդէսը, որոյ մէջ անհամար եկեղեցականք իրենց անուանարկութե եւ բարոյական մահուան վճիռը կը կարդան, եւ աշխարհականք ցաւօք սրտի եւ արտասուօք աչաց այն անարգական տողերուն վերայէն կ'անցնին, երբ ախեղերահռչակ լուր մի, այսինքն Իսահակ եպիսկոպոսի եւ Տիմոթէոս վարդապետի ի Հայաստան երթալն ամէն ազգի լրագիրք գովութեամբ կը հռչակեն, եւ այն նուիրակութեան մասին մինչեւ անգամ Անգղիոյ դահլիճն իւր շնորհակալութիւնը կը յայտնէ Մեծ. Եսայի պատրիարքին, Օսմանեան այն միջցին իւր բաժանորդներուն ի՞նչ լուր հաղորդեց այս նուիրակութեան մասին: Օսմանեան՝ որ ազգային զգացմունք ունի, բայց եկեղեցւոյ խոր ակամք կը նայի, Օսմանեան որ կրօնի եւ հաւատոյ անտարբերութիւն մինչեւ անգամ... կը քարոզէ, այս միջոցիս իւր սկզբունքը կը պաշտէ, իւր ուխտը կը յիշէ, ազգային կղերականութիւնը անգամալուծել, եւ սպաննել. ամենեւին եւ ոչ բառ մի կ'արտասանէ նուիրակութեան մասին, վախնալով չըլլայ թէ գովութի մի տուած լինի անոնց եւ զիրենք իրկող Մեծ. Պատրիարքին: Անցաւ միջոց մի, եւ յիշեալ նուիրակութեան վերայ բարեյաջող լուր մի չլսեցաւ: Օսմանեան չէր քնէր, այլ ծուղակին մէջ կը սպասէր յուշիկ քաշել ախկնոջ նման եւ պարանն իւր ոտից չըջապատած, եւ աչուըքն անքթիթ անկած դէպ ի հարաւ: Եւ ահա յանկարծ կ'իմանայ Մեծ. Սըրբազան Պատրիարքին [illegible] երթալը. ինչո՞ւ համար, իւր ուրբ Ս. Թուոյն կալուածական իրաւանց յափշտակութիւններն յետ դարձընելու, եւ նոյն եկամուտք ժառանգաւորանոցի եւ տպարանի երկու ամենակարեւոր հաստատութեանց ապագայն ապահովել: [illegible] յանցա՞նք մի է Պատրիարքի մի,

երբ Տէրութիւնն անգամ՝ իւր շնորհած հրովարտակին մէջ կը պատուիրէ իւրեան՝ որ Աթոռոյն բոլոր սեփականութիւնը թէ եկեղեցւոյ թէ վանք և թէ հողային կալուածներն պահպանէ . այս չէ՞ և ընդհանուր ազգին փափագն ու պահանջմունքը : Այո, ըստ Օրագլին՝ յանցանք է, վասն զի եկեղեցական անձ մի է այն ազգային ու վանական իրաւանց նախանձաւորն, և իւր նպատակը նոյն եկամուտք եկեղեցւոյ ժառանգաւորաց թիւն աւելցնել է :

Օրագլիկը նոյն յօդուածով չմոռնայր դարձեալ իւր կղերատեսութեան ըրած ուխտը, յանկարծ միտքը կ'ինկնի Խասհաս եպիսկոպոսը, որոյ վերայ զրպարտեցեր էր մինչեւ այն օրը, և կը սկսի հեգնութեամբ պարսաւել նորա նուիրակութեան պաշտօնը : Եթէ ասոնք կղերատեսութիւն չեն, ինչ են. եթէ անձնական պատիւն մեծ է ըստ բարոյագիտաց՝ քան զկեանքը, ուրեմն մարդոյ պատուոյն վնասել՝ նորա կենաց վնասել է . արդ ուրեմն Օրագլիկին դիտաւորութիւնն ինչպէս որ համոզուած եմք, ազգային եկեղեցական պատիւն ապականելն՝ նպատակն է նորա ազդեցութիւնն տկարացնել և ջնջել ժողովրդոց քով . և ասկէ ինչ կը հետեւի, եթէ ոչ եկեղեցւոյ իշխանութիւնը վտանգել և կործանել իսպառ : Ուստի բացատրեցինք մեր համառօտ տեսութիւնն, թէ աշխարհական իշխանութիւնն նիւթապէս և բարոյապէս պարտի նպաստաւոր լինել հոգեւոր իշխանութեան . և ոչ երբեք միջամտել նորա ներքին և սրբազան հանգամանաց, որ է տեսակ մի սրբապղծութիւն : Այս օրինակն եւս ցոյց տուաւ մարմնաւոր իշխանութեան պակասութենէն եկեղեցւոյն կրած ցաւալի աղէտքն ու յարձակմունքը :

Կարծեմ՝ ընթերցողք կրցան դիւրաւ մակաբերել յածներէս՝ որ իւրաքանչիւր անհատ կը պարտաւորի թէ եկեղեցեաց և թէ վանորէից յարատեւութեան և նոցա յառաջադիմութեան ըստ կարի նպաստել նիւթապէս : Այն կալուածները զոր մեր բարեպաշտ նախնիքներն թողուցած են եկեղեցեաց և վանորէից, եթէ մեք չունիմք կարողութիւն արդեամբք՝ նոցա բարի օրինակին հետեւելու, գոնէ անոնց թողուցածները չյափշտակեմք և մեզ սեփականեմք, և նոցա արդիւնքով մեր կոկորդը չպարարեցունեմք, կործանման վտանգի մէջ թողլով զվանորայքը, մանաւանդ Սուրբ Երկրին մէջ գտնուածները, որ ճշմարտապէս ազգային պատկերն ցոյց տուող յատկութեամբ միայն է, ինչպէս ըսած էր մի բանասէր Կ. Պոլսոյ Ս. Փրկչի հիւանդանոցին համար, որ մասնական հաստատութիւն մի է և անչափ օտար ազգաց մօտ. և ոչ սուրբ Աթոռս նման տիեզերահռչակ և ընդհանուր ազգութեան մի նշանակ : Եգիպտոսի վանական կալուածներն ըստ ինս պէս իրենց նպատակին չէին ծառայեր քանի մի տարիէն ի վեր, իսկ Ամեն. Նախապատրիարքն որ ամէն մէկ քայլափոխը մէկ մէկ նշանակութիւն ունի ըստ Օրագլկին, նոյն կալուածոց խնդրոյն համար գնաց ի Գահիրէ. և յոյս ունիմք որ Եգիպտաբնակ ազգայնոց մէկ փոքր մասն եւս մեծագոյն մասին հետ իրաւունք ճանաչելով՝ պիտի զիջանի սիրով յանձնել զկալուածներն Ն. Ամեն. Սրբազնութեան ձեռքը ի նախատինս խնթինայողաց առ սուրբ Աթոռս :

ՏԻԳՐԱՆԵԱՆ ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ

Արժանապատիւ Տիգրանեան Մկրտիչ վարդապետի Երուսաղէմ գալը անցեալ թուով իմացուցինք, որ վեց օր ի Սուրբ Քաղաքս մնալէն յետոյ վերադարձաւ իւր ճամբորդութիւնը շարունակելու դէպ ի Զէյթուն։ Յիշեալ բարեջան և ուսումնասէր Հայրը ժառանգաւորաց դպրոցն երթալով, աշակերտացմէ ոմանք ի պատիւ նորին Արժանապատուութեան այցելութեր նոյն օրը իւրաքանչիւրն մէկ մէկ ոտանաւոր ներբողներ և հայրենրգական համառօտ ճառեր յօրինելով նուիրած են իրեան, զորոնք ի Յոպպէ դառնալէն յետոյ յատուկ նամակաւ մի յուղարկած է Սիոնի մէջ հրատարակելու զանոնք յուրախութիւն իրենց ծնողաց։ Մենք ամսաթերթիս անձկութեան պատճառաւ ակամայ զանց ընելով անոնց հրատարակութիւնը, միայն նամակը և աշխատասիրող աշակերտաց անունները հոս տեղ մէջ բերելու գոհ կը լինինք, որք են Յակոբ Անուշեան Կոստանդնուպօլսեցի, Գրիգոր Բարսեղեան Կեսարացի, Գէորգ Յարութիւնեան Եդեսիացի, Կարապետ Տ. Սահակեան Տիգրանակերտցի, Կարապետ Տասեան Շապինգարահիսարցի, Կարապետ Բարունակեան Արապկիրցի։

Ահաւասիկ յիշեալ նամակը.

„ . . . Սիրելի մեր ի Քրիստոս Յիսուս՝ ողջոյն։

„ Տնօրէնութիւն Նախախնամական Տեսչութեան յաջողեցաւ մեզ ի վերադառնալ յԱղէքսանդրիոյ ելանել ի Յոպպէ, և անտի ի սուրբ Երուսաղէմ յուխտ և յերկրպագութիւն սրբոց անօրինական Տեղեացն։

„ Իբրև եկք ի Յոպպէ և Ռեմլէ, ոչ սակաւ մարդասիրական ընդունելութիւնս տեսաք յԱրժանապատիւ Աթանաս և Խորէն վարդապետաց սուրբ եղբարց։ Իսկ ի հասանել մեր ի Ս. Աթոռն որ յԵրուսաղէմ, առաւել քան զարժանն վայելեցաք զմարդասիրական ընդունելութիւնս ի հոգեգումար սիրապատար սրբազան Հարց և յեղբարց, զորոց մի առ մի սատանօր նկարագրել չներէ մեզ նամակիս համառօտութիւն. բայց ձեր հաւատարիմ սիրելութեան գրչին յանձնեմ զայս գործ ի գլուխ տանել ի գինաց մերոց, զի զոր ինչ տեսաք զընդունելութիւն ի մեր մասին ի սրբոց Հարց միաբանութեան, զայն մի ըստ միոջէ ընդարձակաբար նկարագրել խնդրեմ ի սիրտ անխարդախ Սիոնիդ. և ընդ նկարագրութեանն այնմիկ նաև խառնել զմեր խորին սրտէ ուղերձեալ շնորհակալութիւնն որ առ սրբազան Միաբանութիւնն, որք անքուն ակամբ կամովին տքնիլ և աշխատիլ յանձն առեալ պաշտպանեն զսուրբ Տեղիսն ի չարահնար յափշտակութենէ թշնամեաց։

„ Նաևս յայտնեմ զշնորհակալութիւն ժառանգաւորաց վարժարանի հիմնադրողին և հաւատարիմ տեսչին և աննախանձ պատուելի դասատուաց և կառավարչաց, որք արթուն հսկողութեամբ աշխատին։ Նոյն և շնորհակալ եմ զժառանգաւոր աշակերտաց, որ անձանձրոյթ ամենայն հնազանդութեամբ օր քան զօր աշխատին և փութան յուսումն զանազան գիտութեանց, որոց զպատուական ընկալեալ մեր մատուցանեմ ընդ այսմիկ գրոյս, և խնդրեմ ուրոյն ուրոյն ընդունիլ ի սիրտ Սիոնիդ ի հրատարակումն, ի պատիւ Ս. Աթոռոյն, և ի գովութիւն դասատու պատուելեաց, և ի մխիթարութիւն ծնողաց նոցին և ի քաջալերութիւն ինքեանց և ի ցնծու-

թիւն որոնց բոլոր սրբազան միաբանից ։ Բանզի անխարդախ են ուղերձքս այսքիկ զոր մատուցին մեզ. զի ի սուղ միջոցի որպէս ծնան բանք ի միտս իւրեանց, զնոյն գծագրելով առաժամ ժամու մատուցին մեզ, և ոչ մերձեցան սրբագրիչ մատունք պատուելեաց ի սոսա. վասն որոյ արժան համարեցայ խնդրել ի ձէնջ զհրատարակութիւն սոցա առաջիկայ Մասիսդ, զի ծանիցէ աշխարհ եթէ Մայր աթոռ Սիոնի, ուր մարդ ծնաւ ի նմա ։ Որպիսի հրաւէր կարդամ բոլոր բարեկամաց, զի զուշ իւրեանց դարձուցեն 'ի Ս. Աթոռն, եւ տեսցեն զինչ գտանի 'ի նմա. Աթոռն որոյ ունի կարօտութիւն, ներկայն զինչ գործէ և զինչ պատրաստել աշխատի ապագայից ։ Արժան է յիրաւի ամի ամի ելանել յԵրուսաղէմ, և հարցանել զողջունէ նորին, և յայնժամ տեսցեն զոր ինչ և խնդրեսցեն, որպէս և ես տեսի աչօք և լուայ ականջօք. Տէր փարձահատոյց եղիցի անխարդախ միաբան Սրբազան Հարց և եղբարց, և այց արասցէ յամենայն ժամ սրբոյ մեծի Տանն, որում պաշտօնութեան կամ և մնամ աղօթարար ։

1867 Նոյեմբեր 6 ի Յոպպէ ։ Մկրտիչ Վարդապետ Տէգրանեան Առաջնորդ Բերիոյ. Ուռհայոյ և այլոց ։

Այն նամակաւ խմբագրութեանս մատուցած խնդիրն՝ որով կը պարտաւորէ զմեզ մանրամասնաբար նկարագրել մեր ընթերցողաց իւր ընդունած հիւրասիրութիւնը, սիրով յանձնառու կը լինէինք եթէ սուրբ Աթոռն և միաբանութիւնն իւր պարտաւորութենէն աւելի հիւրամեծարութիւն ցոյց տուած լինէր, որով կը պատուէ նա բոլոր եկեղեցական հիւրերը ։ Իսկ եթէ միաբանութիւնս անհատական սիրոյ եւ պատուոյ զգացմունք մի ցոյց տուաւ նորա սուրբ Հայրութեան, ասիկայ իւր առաջնորդական պաշտօնին մէջ անշահասէր ոգւով ցոյց տուած զոհողութեան եւ անձնական արժանեաց համար էր ։

Յիշեալ Արժ. Հայրը երկրորդ նամակաւ մի կը փութայ նաեւ աւետանել մեզ Եգիպտոսի մէջ այս անգամ երեւելի անձի մի Զէյթունի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ վարժարանին տարեկան ծախսը վճարելու յանձըն առնելը, որ համեմատական հաշւով 60—70 լիրայի կը մօտենայ կ'ըսէ. և կը խնդրէ նորին Հայրութենէն որ նոյն դպրոցին Ներքին Բարեկարգութեան և յառաջադիմութեան համար վասանուի, եւ եռամսեայ և տարեկան քննութեանց արդիւնքներն իրեն խրկուի թաղական խորհրդոյ և ժամանակի առաջնորդին ստորագրութեամբ վաւերացեալ ։ Դարձեալ կը ծանուցանէ մեզ Արժ. Վարդապետը, թէ Զմիւռնոյ մէջ եւս կան պատրաստ այլ եւս ազգասէրք, որոնք խոստացած են յետ փոքր ժամանակի յիշեալ Զէյթուն քաղաքի մէկ դպրոցաց մէկուն տարեկան ծախսը միանձնաւորապէս հատուցանելու. որոնց և մեք առ այժմ իւրեանց գործոյն յաջողութիւն խնդրելով՝ 'ի ժամանակին մեր հրապարակական շնորհակալութիւն եւս կը յայտնեմք երբ արդիւնաւորուած տեսնեմք իրենց բարի կամքը ։

— Ամեն. Սրբազան Պատրիարքն Զէյթունի դպրոցաց համար սուրբ Աթոռոյս մէջ տպուած ամեն տեսակ գրքերէն և 60 հատ քերական խրկած է ձրի. և որովհետեւ ուրիշ շատ քաղաքաց կարօտ վարժարանաց նոյն շընորհքն կ'ընէ միշտ, այսու ամիս Զէյթունի վարժարանաց 60 քերականը քիչ գալով, Արժ. Յովնեցի Աթանաս վարդապետը յանձն առաւ տարուէ տարի 250 քերական խրկելու իւր հայրենեաց դպրոցներուն համար ։

ԿՐՕՆԱԿԱՆՔ

ՍԱՄՈՒԷԼ ՌԱԲԲԻ ԵՒ ԻՒՐ ԳԻՐՔԸ

(Շարունակութիւն. տես թիւ 10)։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Թէ Աստուած Հրէից շաբաթ օրը սուրբ պահելէն և անոնց զոհերէն զզուեցաւ, ու Քրիստոնէից զոհերն ընտրեց։

Խիստ կը վախեմ, Տէր իմ, այն բանէն՝ որ հզօր եւ փառաւոր Աստուած բոլոր Մաղաքիայի բերանով Ա. գլխոյն մէջ, ուր հեթանոսաց զոհերուն վրայ այսպէս ակնարկութիւն ու ձեռնարկութիւն կ'ընէ. "Արեւելից մինչեւ յարեւմուտք հեթանոսներն իմ անուանս մաքուր զոհեր մատուցանեն"[1]։ Արդ, Տէր իմ, ես այնպէս կը մտածեմ որ մեր զոհն ընդունելի չէր, բայց միայն անոր համար սահմանուած տեղը, այսինքն սուրբ Տան մէջ մատուցուելու ըլլար, որ տեղաց՝ այսինքն Աւետեաց երկրէն և մեր զոհէն զրկեց ըզմեզ Աստուած, ու աշխարհիս չորս կողմը ցրուեց. և հիմայ հազար տարի է որ եկաւ հասաւ մեր գլուխը, և կատարեցաւ Աստուծոյ մեզ համար ըսածն Եսայի մարգարէի բերանով և օրինակներով ԻԲ գլխոյն մէջ, ուր կ'ըսէ. "Լեցաւ կութը, եւ ասկէ յետոյ հաւաքում չկայ"[2]։ Սոսկի եկաւ կատարեցաւ մեր վրայ Մաղաքիայի բերանով Աստուծոյ ըսածը. թէ "Իմ կամքս ձեզ հետ չէ, և ձեզմէ զոհ չեմ ընդունիր"[3]։ Այլ և Եսայեայ բերանով ըսածն ալ մեր վրայ կատարեցաւ որ Ա. գլխոյն մէջ կ'ըսէ. "Ձեր շաբաթները, ձեր տօներն և ձեր զոհերը չեմ ընդունիր, վասն զի դուք ամենքդ ալ իմ բարկութեանս ներքև էք"[1]։ Դարձեալ նոյն մարգարէին յիշեալ գլխոյն մէջ Աստուծոյ ըսածն ալ լեցաւ. "Ի՞նչ օգուտ լինի ձեր այդ զոհերուն բազմութիւնը. ինչո՞ւ կը յաճախեցընէք ինձ ոչխարի ու նոխազի մսերուն զոհերը. ես արհամարհեցի հորթերուն արիւնն և ոչխարի ու նոխազի միսերը. երբ զանոնք իմ առաջս մատուցանելու լինիք, չեմ ընդունիր զանոնք ձեզմէ։ Գորաւ տեղն իմ մաքուր քաբերս մի պղծէք. զոհեր ալ մի նուիրէք, վասն զի ձեր խունկն ու շաբաթները չեմ ընդունիր ձեզմէ. որովհետև իմ անձս ատեց զանոնք։ Թէ որ ձեռքերնիդ ինձ բարձրացընելու լինիք, կը դարձընեմ ձեզմէ իմ երեսս. և եթէ ձեր աղաչանքները յաճախեցընէք, չեմ լսեր. վասն զի ձեռքերնիդ արիւնով լի են, եւ ձեր ամեն զոհերն հատած մարմնոյ պէս են, որ արտաքին դրան բակէն դուրս կ'ենէ։ Նաև ով որ ցուլ կը զոհէ ինձ, մարդոյ գլուխ կտրելու պէս է. եւ ով որ նոխազի զոհ կը մատուցանէ ինձ, մկս մատուցանելու պէս է, և գինի մատուցանողը՝ խոզի արիւն նուիրողի պէս"[2]։ Նաև Աստուծոյ այս

---

[1] Տես երեսս 165, էջ Ա. վկայութիւն 1։

[2] Այն վկայութիւնը եօթանասնից թարգմանութեան ԻԲ. գլխոյն մէջ չկայ, այլ Ժ.Զ գլխոյն. 10 համարին մէջ կ'ըսէ "Եւ մի կոխեսցեն գինի 'ի հնձանս քո, քանզի դադարեաց"։

[3] Տես յերես 165, էջ Ա. վկայութիւն 1։

---

[1] Տես վարի համարին մէջ։

[2] Զի՞ կայ իմ և յաճախելոյ զոհիցդ ձերոց, ասէ Տէր. յագեցայ իմ ողջակիզօք խոյոց ձերոց. և զճարպս գառանց, և զարիւն ցլուց և նոխազաց ոչ կամիմ. և ոչ թէ գայցէք յանդիման լինել ինձ։ Ո՞վ խնդրեաց զայդ 'ի ձեռաց ձերոց. կոխել զգաւիթս իմ մի՛ յաճախէք։ Եթէ մատուցանիցէք ինձ նաշիհ՝ ընդ վայր է. և խունկք ձեր պիղծ են ինձ. զգլուխս ամսոց ձերոց, զշաբաթս, և զօրն մեծ ոչ առնում յանձն։ Զպահս և զդատարկութիւնս և զամսագլուխս ձեր, և զտօնս ձեր ատեաց անձն իմ։ Յագեցայ իմ ձեօք. ոչ եւս ներեցից մեղաց ձերոց. յորժամ համբառնայցէք զձեռս ձեր՝ դարձուցից զերեսս իմ 'ի ձէնջ. և եթէ յաճախիցէք յաղօթս՝ ոչ լուայց ձեզ. զի ձեռք ձեր լի են արեամբ. Ես. Ա. 11—15։

զոհերէն երես դարձնելն ուրիշ բան չյուցըներ, եթէ ոչ մեր մարմնական ու թանձրագոյն զոհերն 'ի հոգեւորական և 'ի նուրբ զոհի փոխուիլն այն արդար Տիրոջ՝ որ մէկ տեղ հաց սահմանեց, և մէկ թանձրութեան տեղ՝ ջուր. արեան տեղ՝ անարատ գինի, և մարդ՝ որ Աստուծոյ կը մատուցուի հոգեւորապէս և ընդունելի եղանակաւ. և ոչ մեր ձեռօք գլխատուած կենդանեաց նման, զոր մարգարէն հասած մարմիններու կը նմանեցընէ։ Այսպէս մեր Աստուծոյ եմք և առ Աստուած կը վերադառնամք յամենայնի ինչ որ մեզ պատահելու լինի։

Բայց որովհետեւ չհաւատայինք, Տէր իմ, այն մարգարէին ձեռօք Աստուծոյ խօսեցածին, որ այնքան յայտնի կը գրէ մեր զոհերու վերայ բաները, նաեւ Երեմիայի ձեռօք այլ ըսաց Է. գլխոյն մէջ. «Կանչեցէք մերձաւորներըն 'ի զոհ, և կերէք անոնց հետ ձեր զոհերուն միսը. վասն զի ձեր հայրերը Եգիպտոսէն դուրս հանած օրը, զոհի համար պատուէր չտուի անոնց, այլ ըսի՝ իմ ձայնիս մտիկ ըրէք, և ես ձեզ Աստուած ըլլամ, և դուք ինձ ժողովուրդ եղէք։ Եւ որ երթաք բոլոր այս բաներուն՝ զոր կը պատուիրեմ ձեզ. բարի ըլլայ ձեզ։ Եւ չլսեցին և ականջ չդրին իմ ժողովուրդս»։(1) Եւ դու, Տէր իմ, գիտես այս բանս, բայց Աստուծոյ եմք յամենայնի ինչպէս բան որ պատահեցան մեզ։

(1) Այսպէս ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլի. զողջակէզս ձեր ժողովեցէք հանդերձ զոհիւք ձերովք, և կերայք միս. զի ոչ խօսեցայ ընդ հարսն ձեր, և ոչ պատուէր ետու նոցա յաւուրն յորում հանի զնոսա յերկրէն Եգիպտացւոց՝ վասն բանի ողջակիզաց և զոհից։ Այլ զայս բան պատուիրեցի նոցա, և ասեմ. լուարուք ձայնի իմում, և եղէց ձեզ յԱստուած, և դուք եղիջիք ինձ ժողովուրդ, և գնասջիք յամենայն ճանապարհս իմ զոր պատուիրեցից ձեզ, զի բարի լինիցի ձեզ։ Եւ ոչ լուան ինձ, և ոչ անսացին ունկն նոցա։ Երեմ. Է. 21—24։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Սինակոկին մերժումն ու եկեղեցւոյն ընտրութիւնը կ'արդարացուին այն խօսքովը որ Տէր խօսեցաւ Ռեբեկային։

Կը կարդամ, Տէր իմ, որ Ա. օրինաց գրքին ԻԵ. գլխոյն մէջ գրուած խօսքով սինակոկայն և եկեղեցւոյն կ'իմացուի։ Որովհետեւ ըսաւ Տէր Իսահակայ կնկան Ռեբեկային. «Երկու ազգ կան արգանդիդ մէջ, և երկու ժողովուրդ պիտի խորկուին քու որովայնէդ, և մի ազգը քան զմիւս ազգը պիտի գերազանցէ եւ մեծը փոքրին պիտի ծառայէ»(1)։ Տէր իմ, Ռեբեկայ Հրէից և հեթանոսաց մայր էր. մեծ և անդրանիկ ժողովուրդն էր սինակոկայն պատուոյ և իմաստութեան մասին որով օժտեց Աստուած, այսինքն սինակոկայն զարդարեց։ Իսկ երկրորդական ծընունդ և փոքր ժողովուրդ Աստուծոյ մօտ՝ հեթանոսներն էին, որոնք իրենց անհաւատութեան եւ ապականութեան մէջ մնային։

Բայց, Տէր իմ, եթէ Աստուած զփոխայէն սահմանեց, ինչպէս կը գրէ Եսայի, այն ժամանակ կրսեր ու ճշմարտապէս դարձաւ բոլոր սինակոկայն՝ որ է մեծագոյնը, ու ծառայեց հեթանոսաց՝ որ փոքրագոյնն էր, որպէս զի Աստուծոյ առ Ռեբեկայ ըսուած խօսքը կատարուի. «Մէկ ազգը միւս ազգէն գերազանցէ»։ Իսկ եկեղեցւոյն համար եւս Դաւիթի բերանով կ'ըսէ ԽԵ. սաղմոսին մէջ. «Յանդիման կեցաւ թագուհին քու աջ դիդ ոսկեթել զգեստներով եւ պէս պէս գունով զարդարուած»(2)։

Այս, Տէր իմ, յանդիման կեցու-

(1) Երկու ազգք են յորովայնի քում, և երկու ժողովուրդք յորովայնէ քումմէ զատցին. և ժողովուրդ զժողովրդեամբ եղ և եղ առնիցէ, և երէցն կրտսերոյն ծառայեսցէ։ Ծն. ԻԵ. 23։

(2) Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։ Սաղմ. ԽԴ. 10։

ցած է, ըստ որում հեթանոսաց եկեղեցին՝ որ Թագուհի կը կոչուի զանազան լեզուաց պատճառաւ որոնք նոյն եկեղեցւոյն կը ծառայեն, ցեղ ու ցեղ գոյներու պէս զարդարուած է. վասն զի ամեն լեզուներ համաձայնութեամբ և ճշմարտապէս կը մեկնեն նոյն եկեղեցւոյն մէջ օրէնքները, սաղմոսները և մարգարէից գիրքերը։ Իսկ սինակոկայն մի միայն լեզու ունէր՝ եբրայականը, և իւր զարդարանքը միագոյն ներկուածի պէս էր։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Նոյն բանը կ'ապացուցանէ Սողոմոն մարգարէի խօսքերովը։

Կը փափագիմ, Տէր իմ. վերը ասէց մէջ բերած մարգարէական խօսքերուն վրայ. որովհետեւ կ'ըսեն թէ, Աստուած սինակոկային ըսաց. «Իմ կամքս ձեր զոհերուն մէջ չէ. վասն զի արեւելքէն մինչեւ յարեւմուտք մեծ է իմ անունս հեթանոսաց մէջ, որոնք իմ անուանս մաքուր զոհեր կը նուիրեն»(1)։ Ինչպէս և բնութեամբ խիստ մաքուր է ջուրն և գինին, և ալիւրն որմէն կ'ըլլայ զոհը, որ մաքրուելու և լուացուելու կարօտութիւն չունի։ Իսկ զոհերուն միսը լուացուելու և զոհելի կենդանեաց փորը մաքրուելու պէտք ունին. նոյնպէս և զոհարանին տեղը պէտք է որ լուացուի, ուր կը թափուի զոհերուն արիւնն ու պղծութիւնը։ Վասն զի թէ որ չլուացուին՝ տաղտուկ կը պատճառեն զոհը կատարողներուն։ Իսկ հացի և գինւոյ զոհին մէջ անմաքրութեան բան մի չկայ։ Պատուականագոյն պատարագ մի է, որոյ մէջ զզուելի բան չպարունակիր, երբ մաքրապէս եւս զայն մատուցանելու ըլլանք։ Եւ կարծեմ, Տէր իմ, այս զոհին համար ըսաց Աստուած Սողոմոնի ձեռօք Առակաց ԺԷ. գլխոյն մէջ, թէ «Պատուականագոյն է սիրով մէկտեղ եղած պատառը, քան թէ պատերազմով եղած պարարտ հորթը(1)»։ Արդ մաքուր պատառը, Տէր իմ, հեզութիւնն է, և փոխադարձաբար յանցանաց ներելը. իսկ պատերազմով պարարտ հորթը ակն ընդ ական ըսածն է և թշնամեաց ծածուկ մահը։ Արդեօք, Տէր իմ, սինակոկային զոհը՝ պատերազմով եղած գէր հորթն է, իսկ եկեղեցւոյ զոհը սիրով մէկտեղ եղած պատառն է, և այս նոյն սիրոյ համար կ'ըսէ Աստուած «Պատուականագոյն է պատառ»։ Եւ խիստ գեղեցիկ ցոյց կուտայ Աստուած զեկեղեցին Սողոմոնի բերանով եղնիկներու նմանեցնելով զայն Առակաց Ե. գլխոյն մէջ. «Եղնիկը սիրելագոյն է Աստուծոյ մօտ իւր նախանձաւորութեան, որոյ ծիծերն ամէն ժամանակ քեզ կաթ կու տան, և նորա սէրը յաւիտենապէս կ'ուրախացնէ զքեզ(2)»։ Եւ կերպով մի կրնայ յարմարիլ եթէ ըսելու ըլլանք՝ սինակոկայն եղնիկն է. բայց անկարելի է որ նորա վրայ մեկնենք, մանաւանդ անոր համար որ սինակոկայն մի նախանձաւոր չունի՝ այլ շատ. և իւր նախանձաւորներն էին Մովսէս ու Ահարոն, Դաւիթ, Եսայի, Երեմիա և այլ նմանք։ Այլ Աստուծոյ սիրելի եղած եղնիկը եկեղեցին է՝ նորա (Աստուծոյ) նախանձաւորութեամբը. և Աստուծոյ և եկեղեցւոյն համար գրուեցաւ թէ «Եղնիկը սիրելագոյն է Աստուծոյ մօտ իւր նախանձաւորութեամբը, որ ազնուա-

(1) Տես յերես 165. եՁ Ա. վկայութիւն 1։

(1) Լաւ է պատառ մի համով խաղաղութեամբ, քան զտուն լի զենլեօք և բարեօք թշնամութեամբ։ Առակ. ԺԷ. 1։

(2) Եղն սիրոյ և յաւանակ շնորհաց խօսեսցի ընդ քեզ... և ընդ քեզ եղիցի յամենայն ժամ. զի եթէ զնորա սիրովն գնասցես, բազմապատիկ եղիցիս։ Առակ. Ե. 19։

կանուխթեան և շնորհաց մասին նմանը չունի ։ Յետոյ կ'աւելցնէ , Տէր իմ, ըսելով՝ «Նորա ծիծերը քեզ կաթ կու տան ամէն ժամանակ . նորա սիրտը յաւիտենապէս ուրախանայ » ։

Արդ՝ այս խօսքերով Աստուած ցոյց կու տայ՝ թէ եկեղեցւոյ զոհը (զմարդ) կ'արդարացնէ , և Աստուած զայն մօր կը նմանեցնէ որ իւր զաւկները կաթով կը սնուցանէ . և այն խօսքով որ կ'ըսէ թէ՝ նորա ծիծերը կաթ կու տան քեզ , հոգևորապէս գինիով եղած խորհրդոյ նիւթը կը յայտնէ . և ծիծերը կը յայտնեն՝ թէ խորհուրդն իւր ուրիշ մասերուն մէջ ցանկալի կերակուր և բաւական եղող խորհուրդ է ։ Նոյն զոհը ուրախանալով կը կատարէ եկեղեցին հազար տարիէն ի վեր է մինչև ցայսօր , այն ժամանակէն՝ որ Աստուած սինակոկոյն իւր զոհերն մատուցանելէն զրկեց ։

Իսկ այն նախանձաւորն որով եկեղեցին այնքան հաճելի եղած է Աստուծոյ , Քրիստոս ինքն է . և նորա ծիծերը յաւիտենական գինի կու տան , ուսկէ կը ծագէ յաւիտենական ուրախութիւնը ։ Չըսեր թէ՝ միս և գինութիւն կամ արիւն կու տայ , որոնք սինակոկային մատուցած զոհին բաղկացուցանողներն էին , ուսկէ Աստուած զրկեց զմեզ հազար տարի է հիմակ ։ Սակայն մեք , Տէր իմ , Աստուծոյ եմք ։

Եւ սինակոկոյն կը նմանէր կնկան՝ բայց ի յԱստուծոյ ուրիշ այրեր ևս ունեցող , և կորոյս թէ զայն և թէ ամուսինը ։ Իսկ այս եկեղեցին եղնիկն էր անապատին մէջ՝ առանց այրի , բայց Աստուած նորա տեղը լցուց , վասն որոյ նոյն հզօրն ու փառաւորը կ'ըսէ Եսայեայ ձեռօք ԿԳ. գլխոյն մէջ. «Նշանած աղջիկներուն՝ էրիկ ունեցողներէն աւելի պատուական են (1) » ։ Դաւ-ձեռաւ նոյն մարգարէն կ'ըսէ . «Ես պիտի ընեմ՝ կ'ըսէ տէր Աստուած՝ այգին ու գետերն որ իմ ընտրեալ ժողովուրդս խմէ . և դու Յակոբ չհնազանդիօղ , և դու Իսրայէլ չլսօղ (1) » ։ Ինչպէս որ մեք եմք չհնազանդօղ , ականջ և աչք չունեցող . որոյ համար այս գերութիւնս հասաւ մինչև հազար տարին լրանալը ։ Եւ կը վախնամ , Տէր իմ , մեր օրինաց համար , որ պատրաստ ունի բարկութեան կատարելութիւնը , և կ'ըսէ՝ ակն ընդ ական , և այլն ։ Իսկ այն եղնիկն որ մէկ նախանձաւոր միայն ունի , կ'ըսէ իւր փառաւոր աւետարանին մէջ Ե գլուխ 39 համար Մատթէոսի . «Ով որ քեզ ապտակ տալու ըլլայ աջ ծնօտիդ , դարձու անոր միւսն այլ » ։ Եւ Դաւիթ ԼԱ սաղմոսին մէջ կ'ըսէ . «Ինչպէս մեծ ու շատ է , Տէր , քու քաղցրութիւնդ , զոր երկիւղածներէդ ծածկեցիր և լցուցիր նոյն քաղցրութիւնը քեզ յուսացողներուն (2) » ։ Եւ յայտնի է , Տէր իմ , որ սինակոկային ժողովուրդն օրինաց պատիժներէն կը վախէր , այսինքն՝ ատամն ընդ ատաման ըսածէն , որովհետև նորա կատարելը մահ էր ։ Իսկ եկեղեցւոյ ժողովուրդն Աստուծոյ քաղցրութեան կը յուսայ , որ իւր երեսին ընդունած ապտակին փոխարէն չապտակեր . վասն որոյ և Աստուած հեթանոսներէն եղած ժողովուրդին պատրաստեց իւր խիստ մեծ քաղցրութիւնը զոր Հրէիցմէ պահեց ։ Սակայն Աստուծոյ եմք ամէն դիպուածոյ մէջ։

(1) ԿԳ. գլխոյն մէջ չկայ բերած վկայութիւնը. Իսկ ԾԴ՝ գլխոյն առաջին համարն ասոր համեմատ կ'ըսէ . «Բազում են որդիք ամուլին՝ առաւել քան զարամբւոյն » ։

(1) Նոյն գլխոյն մէջ դարձեալ այսչափ միայն կ'ըսէ ժողովրդեան բերնէն . «Աբրահամ ոչ գիտաց զմեզ , և Իսրայէլ ոչ ծանեաւ զմեզ » ։

(2) Որպէս զի բազում է առատութիւն քաղցրութեան քո , Տէր , զոր պահեցեր երկիւղածոց քոց ։ Արարեր դու այնոցիկ որք յուսացեալ են ի քեզ առաջի որդւոց մարդկան ։ Սաղմ. Լ. 20 ։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Թէ քրիստոնէից սաղմոսերգութիւնն ընդունելի է Աստուծոյ։

Կը զգամ, Տէր իմ, չըլլայ թէ Աստուած մեզ համար խօսեցաւ Եսայեայ բերանովը ԻԸ գլխոյն մէջ. «Ձեր բոլոր այն մարգարէութիւններն ըլլան կնքուած գրքի խօսից նման, զոր չկրնար բանալ կարդացողը, և ոչ գիտութիւն ունեցողը» (1)։ Եւ նախատացեալ որդւոց վերայօք, որոնց համար ինչպէս բոլոր` քանի քանի տեղ խօսեցած է Աստուած, նոյն գլխոյն մէջ կ'ըսէ. «Օտարնոթազգիներն Յակոբայ տունին և Իսրայէլի Աստուծոյն աւետարանէն, և ուղէոք գիտութիւն սորվին. երգեցողք օրհնքներն իմանան (2)»։

Յայտնի կը տեսնեմ, Տէր իմ, որ հազար տարի է մինչեւ հիմայ` ուրէս սաղմոսերգողները մեր օրհնքներն գիտեն և կ'ուսուցին։ Եւ ո՞վ են ուրէք բանձներն, եթէ ոչ հեթանոսները, և ուրիշ ո՞վ պիտի ըլլան սաղմոսերգողները` որ մեր սաղմոսներն և մարգարէութիւններն անոնց եկեղեցիներուն մէջ կը կարդան, եթէ ոչ քրիստոնեաներն։ Եւ այս սաղմոսերգողներուն համար կ'ըսէ Աստուած Դաւիթի բերանովը ՂԵ գլխոյն մէջ, «Տիրոջ նոր երգ երգեցէք, որ սքանչելիքներ ըրաւ»։ Եւ ի՞նչ է նոր երգն ու հինը, Տէր իմ, եթէ ոչ նոր կտակն ու հին օրէնքը։ Նա եւ նոյն սաղմոսերգողաց համար կ'ըսէ Աստուած Դաւիթ մարգարէի ձեռօք ՂԵ սաղմոսին մէջ. «Երգեցէք Տէրոջ բոլոր երկիր, սաղմոս ըսեցէք նորա անուան (3)»։ Նոյն տեղը կ'ըսէ գոռալով. «Քեզ երգեն և քու անուանդ սաղմոս ըսեն բոլոր ազգաց ցեղերը (1)». և եզակի ձայնով Իսրայէլի ցեղը չըսեր։ Դարձեալ նոյն սաղմոսողաց համար կ'ըսէ Դաւիթ բերանովը ՁԸ սաղմոսին մէջ. «Երանի ժողովուրդին որ գիտէ ալալակը, քու երեսիդ լուսովն երթան (2)»։ Այդ համար գրուած է, Տէր իմ, ՁԸ սաղմոսին մէջ. «Քեզ երգեր խօսին ժողովուրդներն իմ Աստուծոյս տանը մէջ (3)»։ Եւ հիմայ հազար տարի է, քանի որ մեր Հրէայքս սուրբ տանը մէջ սաղմոս չեմք խօսիր։ Կ'ըսէ դարձեալ Դաւիթ նոյն սաղմոսաց համար. «Երգեր երգեն Աստուծոյ տան մէջ յաւիտեանս (4)»։ Եւ մեզ համար կ'ըսէ ՃԼԹ սաղմոսին մէջ. «Ի՞նչպէս Աստուծոյ երգեր երգեն օտար երկրի մէջ (5)»։

Եւ ի՞նչ կերպով կրնամք յուսալ, Տէր իմ, երկիրն ու անուանն ատանալու, այն ժամանակիս մէջ որ Աստուած Ամոսայ մարգարէին բերանովը կ'ըսէ Գ գլխոյն մէջ. «Ինկաւ Իսրայէլն և չպիտի կանգնի. Իսրայէլի կոյսն ինկած է, և չպիտի բարձրանայ (6)»։ Նոյն մարգարէն Թ գլուխը կ'ըսէ. «Եւ պիտի գայ նեղութիւն, և անոնցմէ փախչողը չպիտի ապրի. և եթէ Կարմելոս լեռը պահուելու ըլլան, անկէ եւս զանոնք պիտի գտնէ իմ ձեռքս. և եթէ ծովուն խորն իջնելու ըլլան, հոն եւս պիտի խրկեմ վիշապներն որ խայթեն

---

(1) Տես յերես 132, էջ Ա. վկայութիւն 1։

(2) Ուրք պատուեն զսուրբն Յակոբայ, և երկիցեն յԱստուծոյն Իսրայէլի։ Եւ ծանիցեն մոլորեալք հոգւով զիմաստութիւն, և տրտնջօղք ուսցին զհնազանդութիւն. և լեզուք թոթովախօսք ուսցին խօսել զխաղաղութիւն։ Եսայ. ԻԹ. 23. 24։

(3) Օրհնեցէք զՏէր ամենայն երկիր. օրհնեցէք զՏէր և օրհնեցէք զանուն նորա։ Սաղմ. ՂԵ. 1։

(1) Մատուցէք Տեառն ազինք ազանց, մատուցէք Տեառն զփառս և զպատիւ. մատուցէք Տեառն զփառս անուան նորա։ Անդ. ՂԵ. 7։

(2) Երանի ժողովրդեան որ գիտեն զօրհնութիւնս քո Տէր. ի լոյս երեսաց քոց գնասցեն։ Անդ. ՁԸ. 16։

(3) (4) Այս երկու վկայութիւնները չկան։

(5) Զիա՞րդ օրհնեսցուք զօրհնութիւնս Տեառն յերկրի օտար։ Անդ. ՃԼԶ. 4։

(6) Անկաւ տունն Իսրայէլի, և ոչ եւս յաւելու յառնել։ Կոյսն Իսրայէլի կործանեցաւ յերկրի իւրում, և չիք ոք որ կանգնեսցէ զնա։ Ամովս. Ե. 1. 2։

զանոնք. և եթէ իրենց թշնամեաց երեսէն գերութեան երթալու ըլլին, հոն պիտի խրկեմ սուրն որ սպաննէ զանոնք, և աչքս նոցա վերայ պիտի դնեմ չարի և ոչ բարւոյ համար (1) „: Եւ այս բաները Աստուած մեր վերայ կատարեց հազար տարուան միջոցիս մէջ. այն ժամանակէն մինչև ցայսօր քանի որ ոչ երգերն և ոչ սաղմոսներն կ'երգեմք: Սակայն Աստուծոյ եմք ամէն դէպքերու մէջ:

Ի յաջորդն:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՌԱՔԻՆԻ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՊԱՏԱՆԻ

(Շարունակութիւն. տես թիւ 10):

ԻԱ.

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ ԶՄԻՏԴ:

Կրթութեամբ նաև միտքն ալ կը կատարելագործուի: Սկզբան երկու տող բան մը միտքդ պահելու համար ո՛րչափ կը տանջուէիր, հիմա դիւրաւ առանց նեղութեան ամբողջ երեսներ բերնուդ կը սորվիս ու այնչափ բանի խելք կը հասցնես. որ մէկը չկրնար եթէ կրթուած չըլլայ. և աս ինչու. վասն զի կրթուեր ես:

Ճշմարտութիւնը ճանչնալու համար, իրաց իրարու հետ ունեցած վերաբերութիւններն հարկաւոր է գիտնալ, հետևանքները գուշակել, որով ըսել է թէ պէտք է կրթութեամբ միտքը կատարելագործել և իրեն պակասութիւններէն զինքը բուժել: Ասոր պակասութիւններն են Տգիտութիւն և Սխալմունք: Տգիտութիւնն է ճշմարտութիւնը չճանչնալ. իսկ սխալմունքն է սուտ բանի հաւատալ: Դաստիարակութիւնը երկուքին ալ կը յաղթէ, որով ապագայ տհաճութեանց առջևը կ'առնէ և ախորժ կը պատճառէ: Ատեն մը կը կարծուէր որ գիսաւորները դժբախտութիւններու գուշակ ըլլան. ուստի անոնց երևնալուն պէս կը կարծէին որ ամէն տեսակ ձախորդութիւն գլխուն պիտի հասնի. դարձեալ՝ կը կարծէին որ զանգակներն հնչեցնելով մրրիկը կը դադրի. բայց ընդհակառակին անով աշտարակներու և զանգակատուններու վրայ կայծակ կը զարնէր շատ անգամ զանգակահարը սպաննելով: Նաև մարդիկ չէին ուզեր որ տղոց պատուաստ ըլլայ (1), որով շատերըն ալ կը մեռնէին, կամ շատերը այլանդակ ու տգեղ կերպարանք մը կ'ունենային: Տգէտը լեցուն է աւելորդապաշտութիւններով. մեռելներէն կը վախէ. ոգիներէ, խրտուիլակներէ ու կախարդներէ կը սարսափի, և անոնց վախէն խալսելու համար սուտ ու մութ ջերմեռանդութիւններ կ'ընէ, որով կրօնքը աւելի կ'անարգէ ու կ'անպատուէ: Տգէտը հանդիպած բաներուն հետևանքը մտածելով ապագան գուշակելու տեղ, մոլորակաց բռնած շրջանէն ու աստղաբաշխներուն բաժներէն կ'ուզէ ըլլալիքներն իմանալ. ինչպէս նաև կը կարծէ որ ջուր և ուրիշ խաղերով բաղդը պիտի շինէ. խաբեբաներու և կախարդներու մէջ կ'երթայ կը նստի. ոչ մարդուս իրաւունքները գիտէ, ոչ իրեն իրաւունքները յարգել կուտայ, և ոչ ալ ինքը ուրիշ-

(1) Մի ապրեսցի ի նոցանէն փախուցեալն. և մի զերծցի ի նոցանէ զերծեալն: Զի եթէ ծածկեսցին ի դժոխս, անտի ձեռն իմ կորզեսցէ զնոսա. և եթէ ելանիցեն յերկինս, և անտի իջուցից զնոսա. և եթէ թաքիցեն ի բարձունս Կարմելոյ, և անտի յուզեցից և առից զնոսա: Եւ եթէ ընկլիցին յաչաց իմոց ի խորս ծովու, և անդ հրամայեցից վիշապին խայթել զնոսա: Եւ եթէ գնասցեն ի գերութիւն առաջի թշնամեաց իւրեանց, և անդ հրամայեցից սրոյ՝ և սատակեսցէ զնոսա: Եւ հաստատեցից ի վերայ նոցա զաչս իմ ի չարութիւն և ոչ ի բարութիւն: Ամ. Թ. 1—4:

(1) Տար երկինք որ Եւրոպայէն ալ աս խօսքը փարատէր այս նախապաշարմունքը և մարդկային սեռը ազատէր: (Ծան. Օրինակչին):

ներուն խրատունքը կը յարգէ ։

Ընդհակառակն ո՛րչափ ախորժ կ'ունենայ մարդս բան սորվելով , ո՛րչափ նորանոր բաներ կը կարդայ գրքերու մէջ ։ Ձան երեւելի մարդկանց անուններն ու ըրած գործքերը կը սորվի . քու երկրիդ պատմութիւնը , ճամբորդութիւնները , գիւտերը . բնութեան ու երկինքին երեսը տեսնուած երեւոյթները , և ինչ որ աշխարհքիս մէջ կը հանդիպի ամէնը կ'իմանայ . ուրիշ տեղ մը կը կարդայ նորանոր գիւտեր որոնք կը հարստացնեն ըմարդ և գիտութիւններ կը սորվեցնեն սատկի և ժամանակի խնայութեամբ ։ Ուրիշ տեղ մը կը սորվի մարդ՝ թէ ի՛նչ պիտի ընէ ու ի՛նչ բանէ պիտի զգուշանայ առողջնի ու քաղաքակիրթ մարդու մը պէս ապրելու համար . և երբոր ուրիշ բան չունենար ընելու , իրեն զբաղելու բան մը կը գտնայ ։ Չեմ կրնար մէկիկ մէկիկ համրել թէ ո՛րչափ մարդը կ'օգտուի ու կը զուարճանայ գիրք կարդալով . միայն թէ աղէկ գրքեր ըլլան . այնինքն սորվեցուցածնին գիտնալու արժանի բան մը ըլլայ ու բարձնին պարկեշտ ու չնորհքով ։

Բանուորներ եղան որ ժողովուրդն ընկճելու եւ խոնարհեցնելու համար անոնց կարդալ սորվելն արգիլեցին ։ Յուլիանոս կայսր Քրիստոնեաներուն ընկճել ուզելով , ա՜հ , ի՛նչ անօրէնութիւն . թող չէր տար որ ուսումնք սորվին . և թէ որ այսօրուան օրս թագաւոր մը կարդալ գրել սորվիլը արգիլէ՝ (1) ինչպիսի անգգամ մը չսեպուիր , և ահաւասիկ շատերը դաստիարակութեանէ չըլլալով իրենց կամքը այս կերպով զիրենք կ'ընկճեն ու կը նուաստացընեն ։ Գաղղիա ու Անգղիա կառավարները մէկ կողմանէ կը կարդան ու միւս կողմանէ կը սպասեն որ ճամբորդ մը գայ որ առնի՞ . դժնասպաններն ալ նոյնպէս դուռը սպասած միջոցնին կը կարդան . և կօշիկ մաքրողները քովերնին օրագիր ունին որպէս զի որոնք որ իրենց կօշիկնին փայլեցնել տալու կու գան , անոնց կարդալ տան ։

Քանի որ ատենոյդ է , ով պատանեակք , սորվելու ետեւէ եղէք . ծնողքնիդ հիմա ձեր տեղը կ'աշխատին որ դուք ժամանակ ունենաք բան սորվելու . բայց օր կու գայ որ դուք ձեզմէ պիտի սկսիք վաստըկիլ . և այն ատեն ինչպէս պիտի ուրախանաք երախտապարտութեան միջոց սորված ըլլալնուդ վրայ ։ Ձեզմէ աւելի գիտուններուն հետ ընկերացէք . պատշած համեստութեամբ ուզածնիդ հարցուցէք իրենց , և բածնին մտքերնիդ պահեցէք ։ Տգէտներուն մի վստահիք որոնք որ առանց զձեզ խաբել ուզելու , կրնան սխալ բաներ հասկըցնել ձեզի ։

Թէպէտ կարդալ գրել ու հաշիւ բանել չսորվեցաւ որևոր բառ ինքեան ամենքը պարտական են գիտնալու . ասով չկրնար փոխ առածը նշանել , առածը առածը չգրեր , ուսուի կը մնանայ . կուրի մը պէս ուրիշներուն ըրածին ետեւէն կ'երթայ՝ առանց պատճառը գիտնալու . իրեն երկրին օրէնքներուն տգէտ ըլլալով չպահեր զանոնք . իրմէ հեռու եղողի մը թէ որ հարկ ըլլայ բան մը ըսել , չի խեր ինչ կերպով ըսէ . նամակ մը որ առնէ՝ պէտք է որ կարդացընել տալու համար ուրիշներուն վազէ , որով իւր ծածուկը ուրիշին կը յայտնէ . ինչպէս նաև երբոր հրապարակի մը մէջ հրավարտակ մը կամ ծանուցագիր մը կըրցուած ըլլայ՝ հասկընալու համար ու-

(1) Թէպէտ չկայ այնպիսի թագաւոր մը , բայց դժբաղդաբար մեր Հայ ազգին մէջ շատ կան կարդալ գրել սորվելը արգելող Առաջնորդներ ու չորպաճիներ որոնց համար բարձ կամ դարձ կը մաղթեմք ։ (Ծան. Օրինակողին.)

ընչև կարող է, ամէն վայրկեան կը մա-հանայ. ու հարկ կ՚ըլլայ որ Պրէւլէօ գէտէր ըսէ ։ Նմէ վրայ կամ նիքահայր ըլլայ, և ոչ իր անունը կրնայ ստորա-գրել. մուրհակներու և յետակարներու տակ խաչէ մը զատ ուրիշ բան չկրնար դնել. զինուորութեան մէջ թէպէտ սպայ ու քաջ ալ ըլլայ, բայց չկրնար աստիճանի մը հասնել. և ոչ տանու-տէր կրնայ ըլլալ, թէպէտ ամենա-վարժ ալ ըլլայ իրեն արհեստին մէջ, հաշիւ չգիտնալուն պատճառաւ պարզ նիւթական արհեստաւոր մը կը սեպ-ուի ։ Օաւկլները դպրոց կը խաւրէ, ու ինքն անոնց գրքերէն բան մը չը-հասկընար և ոչ իսկ կրնայ իրենց բա-րին ըմբռնել. տանի օր մը եթէ ըլլայ, չգիտեր ժամանակը ինչպէս անցընէ, պանդուխտ մը կ՚երթայ տունը կը փճա-ցընէ ու կը գինովնայ ։ Որչափ անգամ շատերէն լսեր եմ որ կ՚ըսեն. Մն, ո՛ւր էր ԲԷ թղայօ-բեաւս ծէլոյ երիօ- փալէ մը չօֆ օխամօխսաղ օղլեր- եփէ-է եղած ըլլայի ։

Նապոլէոն 1812 ին Իտալիոյ թագա-ւոր եղած միջոցը շատ մը Իտալացի ե-րիտասարդներ խաւրեց ինչուան Ռու-սաստան որ երթան պատերազմին. ի-րենք քաջութեամբ պատերազմեցան, բայց ցուրտն ու սովը բոլոր իրենց բա-նակը փճացուց. մեծ մասը մեռան, շա-տերն ալ գերի եղան ։ Այս խեղճերուն մէջէն անոնք որ քիչ մը աւելի բան գի-տէին, փոխանակ անբաններու պէս Սիպերիա երթալու աշխատելու, տա-ղին անդին տներու մէջ սկսան կար-դալ գրել սորվեցընել. ու տանելով հանգիստ ու պատուաւոր կեանք մը անցընելով կրցան բաւական ստակ ձեռք ձգել. որով ան խեղճէ դուրս մխիթա-րութիւնն ունեցան որ նորէն իրենց հայրենիքը կարենան վերադառնալ ։

Կը շարունակուի ։

Ներկայ ամսոյ մէջ Ժառանգաւորաց աշակերտ մի հասաւ Եգիպտոսէն Իսքէնտէր անուն որ ըստ օրինի բժշկական քննութենէ անցնելով՝ ընդունեցաւ ի Ժառանգաւորացն ։ Ահաւասիկ Բժշկին վկայագիրը ։

„Սուրբ Աթոռոյս Ժառանգաւորաց դպրոցի Արժանապատիւ Տեսուչ Մկրտիչ Վարդապետի միջոցաւ, մեզ ներկայացած Եգիպտոսցի Իսկէնտէր Յովսէփեան աշակերտացու տասն և մէկ տարեկան, և ծաղիկ հիւանդութենէ պատուաստուած պատանոյն համար, կը վկայեմ ստորագրեալս որ, բնութեամբ՝ ջղային առողջ և քաջակազմ է ”։

12 Նոյեմբեր 1867 — ՍԱՀԱԿ ՊԻԹԱՊՃԵԱՆ
ԲԺԻՇԿ, ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Տեղւոյս Վսեմ. կառավարիչ Նազիֆ փաշային շաբաթէ մի ՚ի վեր ՚ի Յոպպէ կը գտնուի ՚ի պատճառս չինութեան ճանապարհաց. որոյ օր յառաջ լմննալուն համար կ՚ըսուի թէ Յոպպէէն ևս պիտի սկսին յարդարել և հասնիլ մինչեւ ՚ի կիրճն, ուրանց գրեթէ մօտեցած են Երուսաղէմէ սկսելով ։ Յիշեալ կիրճէն մինչեւ ՚ի Ռամլա և անկէ մինչև ՚ի Յոպպէ՝ որ 7 ժամուան միջոց է, բոլորովին աւազուտ ըլլալով, քարյատակներ պիտի չինուին ։

Նորին Վսեմութեան և տեղւոյս Ամերիկայի Հիւպատոսի մէջ ծագած գժտութեան մի տարաձայնութիւն կը լսուի հասարակութեան բերանը, որոյ բարեկամական կարգադրութեան համար Ս. Պոլսէն հրամաններ եկած են, կ՚ըսուի, այսու ամենայնիւ դեռ դադրութիւն մի չլինելուն՝ ակամայ զանց կառնումք յիշեալ գժտութեան պատճառներուն վերայ խօսիլ ։

—Սալթի և Յորդանանու կողմերը շնորհիւ բարեխնամ Տէրութեան կատարեալ խաղաղութեան մէջ կը գտնուին ։ Շէխ Տիապի համար կ՚ըսուի թէ, Դամասկոս երթալուն, ինչպէս և նախորդ թուով ակնարկութիւն ըրած էինք, Վսեմ. Վալի փաշայն երեք հարիւր անկանոն զօրաց գլուխ կար-

դնելով զինքն 'ի Նաբլուս խրկած է, այն կողմերու պաշտամունքին իրեն յանձնելով:

— Դամասկոսի Վսեմ. Վալի փաշայն 'ի Պէյրութ կը գտնուի բարձրագոյն հրամանաւ, ուր ընդհանուր ժողով մը պիտի գումարուի յիշեալ նահանգին ժողովրդոց վիճակին վերայօք քննութիւններ ընելու նպատակաւ, և այն ժողովոյն անդամներն արդէն իւրաքանչիւր քաղաքներէ մէկ մէկ կամ երկու անձինք ժողովրդեան քուէարկութեամբ ընտրուելով հոն հասած են: Երուսաղէմի երեք Քրիստոնեայ ազգաց կողմէն ընտրուեցաւ սուրբ Աթոռոյս Արաբերէն լեզուի գրագիր Խաչատրեան պարոն Յովհաննէս և Ռամլայ կողմէն Նասրի էֆէնտին, նոյնպէս Յոպպէէն և Գազայէն մէկ մէկ անձինք քուէարկութեամբ ընտրուելով արդէն մեկնեցան 'ի Պէյրութ, և ամսոյս 18 ին հոն հասնելով Վսեմափայլ փաշային ներկայացան: Կ'ըսուի թէ նահանգական ընդհանուր ժողովը մինչև ռամազանի 10 ըլլալ տևէ, այսինքն մինչև ի 24 դեկտեմբերի:

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ

Յիշեալ գիրքը սուրբ Աթոռոյս մէջ 1843 ին տպուած և սրբագրուած ըլլալով, այս անգամ նորէն տպուեցաւ մեծագոյն զգուշութեամբ: Հինգ օրինակ ձեռագրաց հետ համեմատուելով գրեթէ առաջին տպին սրբագրեալը կրնայ համարիլ: Բաց անկէ գլուխներու բաժնուած է հանդերձ վերնագրութեամբք. և օրինակաց գլխաւոր տարբերութիւններն ևս իւրաքանչիւր էջին ներքեւ նշանակուած են:

ՄԵՆՏՈՐ ՄԱՆԿԱՆՑ
ԿԱՄ
ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ

Աշխարհաբառ լեզուաւ ընտիր բարոյական գիրք մի է նորահաս պատանեաց յատկացեալ, որ գեղեցիկ օրինակներով կ'աւանդէ ատել զմոլութիւնն և սիրել զառաքինութիւնը:

Կը պարունակէ 350 էջ: Այս գիրքը կրնայ միանգամայն իբր դասատետր ծառայել դպրոցաց մէջ, թէ՛ հասարակ ընթերցանութեան և թէ բարոյական դաստիարակութեան համար:

ԳԻՐՔ ՈՍԿԵԴԻՆԻԿ
ՍԱՐՈՒԿ. ՕՐԱՐԻ ՀՐԷԻ

Այս ընտիր երկասիրութիւնն, որու ամբողջութիւնն ներկայ տարւոյս Սիոնի մէջ մաս առ մաս հրատարակուելով և առաջիկայ դեկտեմբեր ամսոյն մէջ պիտի վերջանայ, ի խնդրոյ ոմանց հեռաւոր բաժանորդաց ազգին՝ առանձին ևս տպագրութեամբ ի լոյս ընծայուեցաւ:

— Յայտնի է ուսումնասէր ընթերցողաց որ քանի մի տարիէ իվեր սկսուած է հին և նոր կտակարանի ամբողջ ցանկը յօրինելու, և արդէն լրացած ըլլալով՝ որոշուած է մամլոյ յանձնել. եթէ հասարակութիւնը բարեհաճի ձեռնտու լինել անոր ծախուցը, կամ բաժանորդագրութեամբ և կամ առանձին առատաձեռն օգնութեամբ: Միաբանութիւնս պատրաստ է միանգամայն և յօժար՝ ուրիշ կարեւորագոյն գրեանք ևս ի լոյս ընծայել, եթէ բարեսէր հասարակութիւնը չզլանայ իւր օժանդակութիւնը, ըստ որում որոշեալ ձեռագիրք բաւական գումարի պէտս ունին, և Ս. Աթոռս իւր արդի նեղ վիճակին մէջ անբաւական է յանձնէ հոգալ նոցա ծախքը:

ՀՐԱՄԱՅԵՑԱՔ ՏՊԱԳՐԵԼ.
ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՍԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՆՈՒԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ

Ամեն. Տ. Տ. ԵՍԱՅԻ Սրբազան Պատրիարք (3 օրի.)։
Գեր. Խաչակ Արքեպիսկոպոս (2 օրի.)։
» Կարապետ Արքեպիսկոպոս։
» Յակոբ Արքեպիսկոպոս (2 օրի)։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ

Տէր Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց։

ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ

Աշըգեան մահտեսի Յակոբ աղա։
Գրիգորեան Սարգիս էֆէնտի
Գ. Եուսուֆեան Աղէքսանդր աղա։
Ջաքեան Կարապետ աղա։
Խալաթեան մահտեսի Յակոբ աղա։
» Անոյ Աղգասիրական Ընկերութեան։
Հայտաճեան Մելքոն աղա։
Համամա Ճիվանի Գրիգորեան։
Ճէլալեանճեան Գասպրի աղա։
Նիկողոսեան Յարութիւն էֆէնտի։
Պօղոս աղա Բէլաքօֆ։
Սեղբոսեան Գաբրիէլ աղա։
Սէֆէլեան մահտեսի Պօղոս էֆէնտի։
Տէր Գասպարեան Ղազարոս աղա։

ԱՆՏԻՈՔ

Գեր. առաջնորդ Յովհաննէս վարդապետ Բէքմէզճեան։
Եազըճեան Սարգիս աղա Կազանճեանցի։
Յակոբ աղա անուամ կառավարութեան ժողովոյ։
Քէօսէեան Սարգիս աղա Արապկերցի։

ԱՏԱԲԱԶԱՐ

Եղիաեան Մնացական աղա։
Թապախեան մահտեսի Խաչատուր աղա։
Կօրկքեան մահտեսի Սահակ աղա։

ԱՖԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ

Վարդանեան Գրիգոր աղա։

ԲԵՐԻԱ

Գեր. Առաջնորդ Մկրտիչ վարդապետ Չիլինկիրեան։
Աճէմեան Միքայէլ աղա։
Բրուտեան մահտեսի Մանաս աղա Արապկերցի։
Գալչըճեան Յովսէփեան Գրիգոր աղա։
Գույումճեանց Օհան աղա Յամիթեցի։
Եկաւեանց եղբարք Սեղբոս աղա Արապկերցի։
Թիւֆէնկճեան Մկրտիչ աղա Յամիթեցի։
Ղարակիւլեան Մինաս աղա Արապկերցի։
Մահտեսի Պօղոս աղա Թէրզի պաշեան։
Շահվէքիլեան մահտեսի Աստուածատուր աղա։
Սաղաթճըլեան մահտեսի Կարապետ աղա Արապկերցի։
Սաւաֆեան Ղազարոս էֆէնտի։
Տէր Գրիգորեան մահտեսի Կարապետ աղա։
Տէր Խաչատուրեան մահտեսի Սարգիս աղա։
Տէր Կարապետեան Սարգիս աղա Յամիթեցի։
Տէր Մարգարեան մահտեսի Նիկողոս աղա։
Տէր Յակոբեան Վարդան աղա Յամիթեցի։
Տէր Սահակեան մահտեսի Յովհաննէս աղա։
Քիւրքճեանօֆ Յովհաննէս էֆէնտի։

ԳԱՆՁԱԿ

Արժ. Յակոբ վարդապետ տէր Աւետիքեան։

ԴԱՄԱՍԿՈՍ

Արժ. Բառնաբաս վարդապետ աւագ։
Թէրզիպաշեան Եօբաս աղա։
Գօլանճեան Գէորգ աղա։
Գօլէադեան Յակոբ աղա Տիգրանակերտցի։
Խոնէնաերեան Գրիգոր աղա սարրաֆ։
Խապէժբեարեան մահտ. Յարութիւն աղա Եաղմէցի։
Կարապետ աղա Դեմիր Պօլսեցի։
Դարաղեան Գէորգ աղա Չմշկածագեցի։
Մանուկեան Միքայէլ աղա Մալաթիացի։
Ուսումնասէր Ընկերութիւն։
Սասունեան Մարտիրոս աղա քիւրքճի Մալաթիացի։
Սէֆերեան Մարտիրոս աղա Տիգրանակերտցի։

Փափազեանճեան Սարգիս աղայէ նուէր գոլեջական աշակերտներուն։
Փիլիպոսեան Գաբրիէլ աղա Մալկերցի։

ԵԳԻՊՏՈՍ

Արժանապատիւ Միքայէլ վարդապետ։
» Կարապետ վարդապետ։
Գալֆայեան մահտեսի Ներսէս օրիորդ Պօլսեցի։
Լազարով Սիմէօն աղա Զմիւռնացի։
Կարապետեան Պօղոս էֆէնտի։
Կարապետեան Սարգիս և Յակոբ աղայք։
Յակոբեան Թադէոս աղա։
Յակոբեան Սահակ աղա Ճէլալեանճի։
Նուէր Խորէնեան վարժարանի։
Ռաֆայէլեան Գէորգ Պէյ։
Սահակեան Միքայէլ աղա Ամասիացի։

ԵՐԶՆԿԱՅ

Քիւրտօղլեան մահտեսի Գրիգոր աղա։

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Վանական Նովիք Փաշայ կառավարիչ քաղաքիս։
Ալիս Փաշայ։
Արժանապատիւ Վրթանէս վարդապետ։
» Պետրոս վարդապետ։
» Յովհաննէս վարդապետ։
» Եղիշէ վարդապետ։
» Խաչատուր վարդապետ։
» Կիրակոս վարդապետ։
» Ներսէս վարդապետ։
» Տիմոթէոս վարդապետ։
» Երեմիա վարդապետ։
» Աստուածատուր վարդապետ։
» Սրապիոն վարդապետ։
» Փիլիպպոս վարդապետ։
» Իգնատիոս վարդապետ։
» Խորէն վարդապետ։
» Մկրտիչ վարդապետ։
» Սեդրակ վարդապետ։
» Թադէոս վարդապետ։
» Բարդուղիմէոս վարդապետ։
Տէր Յակոբ քահանայ Երզնկացի։
Սարկաւագ Բարսեղ Բաղիշեցի։
» Գաբրիէլ Վանցի։
» Յարութիւն Ա. Կէօմիւրճեան Պօլսեցի։
Տիրացու Խաչատուր Բէթղէհէմցի։
Ամերիկայի հիւպատոս, Mr. Victor Beaubouchér, Consul d'Amérique.
Անգղիոյ հիւպ. Mr. N. Moore, Consul d'Angleterre.
Գաղղիոյ ընդհանուր հիւպ. Mr. E. de Barère, Consul Général de France.
Գաղղիոյ հիւպատոսարանի քարտուղար. Mr. F. Rougon, Chancelier du Consulat de France.
Խաչատուրեան Յակոբ աղա։
Մաթոսեան Կարապետ աղա։
Մուրատեան Բաղտասար Յակոբ աղա (2 օրի.)։
Մուրատեան Գաբրիէլ աղա։
Ռուսիոյ հիւ. Mr. André Kartzoff, Consul de Russie.
Սարգիս Պօղոսեան Յակոբոս աղա։
Ս. Մուրատեան Ղազարոս աղա։
Սպանիոյ հիւպ. Mr. Louis Dodici, Consul d'Espagne.

ԵԴԵՍԻԱ

Գալըճարեան մահտեսի Գրիգոր աղա Այնթապցի։
Լուսաւորչական ընկերութիւն։
Լուսաւորչ. ընկ. դիշերային ուսումնք։
Պասմաճեան մահտեսի Պապասակ աղա։

ԵՐԵՒԱՆ

Տէր Յովսէփ քահանայ Մելիքեանց։
Քերիմով մահտեսի Եղիազար աղա։

ԵԻԴՈԿԻԱ

Առաջնորդ Եւդոկիոյ արժ. Յակոբ վարդապետ։
Զամքերթճեան Գրիգոր աղա։

ԶՄԻՒՌՆԻԱ

Տէր Յակոբ քահանայ Պապազեանեան։
Աղաճանեան Սահակ աղա։

Գուշատալեան Յովհաննէս աղա ։
Եսայեան մահտեսի Յակոբ աղա ։
Զօրայեան Մինաս աղա ։
Իլմասեան Գէորգ աղա ։
Համբարձումեան մահտեսի Փ. Գալուստ պատուելի Երզնկացի (Պայպուրտ) ։
Ճշմարտախօսեան Ստեփան աղա ։
Մ. Եքիզեան Խաչատուր աղա ։
Մաքսուտեան Յակոբ աղա ։
Մեսրոպեան վարժարան ։
Յ. Եքիզեան Խաչատուր աղա ։
Չիլինկիրեան Գրիգոր աղա ։
Չեմենճեան Բարսեղ աղա ։
Չիփիճեան Յակոբ աղա ։
Պալտազարեան Ղուկաս աղա ։
Պալտազարեան Պօղոսատուր աղա ։
Պէկօղլեան Մատթէոս աղա . (3 օրինակ) ։
Սաւալանենց Ջանիկ աղա ։
Սրվաճեան Յովհաննէս աղա . (վասն Արշակունեան վարժարանին Ադրիանուպոլսոյ) ։
Սուրդանեան մահտեսի Գէորգ աղա ։
Սարդալեան մահտեսի Նաղուլ աղա ։
Վարպետեան Յակոբ աղա ։
Տամկաճեան Յովհաննէս աղա ։
Տամկաճեան Սարգիս աղա ։
Տէտէեան Յարութիւն աղա ։
Տէր Փիլիպպոսեան Մարտիրոս աղա ։
Փափազեան Յարութիւն աղա ։

ԷՋՄԻԱԾԻՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳ վեհափառ կաթողիկոս (2 օրի.) ։
Գեր. Անդրէաս Եպիսկոպոս ։
Արժ. Թադէոս վարդապետ Ջիհանեան ։
" Սարգիս վարդապետ Տէր Գասպարեան ։
" Գրիգոր վարդապետ Մուշեղեանց ։

ԹԷՔԻՐՏԱՂ

Գեր. Թադէոս Սրբազան Արքեպիսկոպոս բարեխնամ Առաջնորդ ։
Տ. Արիստակէս քահանայ Ֆէսլեան ։
Տ. Վարթանէս քահանայ ։
Գէորգեան մահտեսի Տօնիկ աղա ։
Փիլիպոսեան մահտեսի Յակոբ աղա ։

ԹԻՖԼԻԶ

Գեր. Մակար Սրբազան Արքեպիսկոպոս Առաջնորդ Վրաստանի և Իմէրէթի ։
Արժ. Սուքիաս վարդապետ Պարզեանց ։
Տէր Խաչիկ աւագ քահանայ Սահառունի ։
Տէր Մովսէս աւագ քահանայ Սայաթնեանց ։
Տէր Մկրտիչ աւագ քահանայ Տէր Գրիգորեանց ։
Տէր Յովսէփ աւագ քահանայ Օրբէլեանց ։
Տէր Ղազար աւագ քահանայ Դաւթեանց ։
Տէր Յովհաննէս աւագ քահանայ Արարատեանց ։
Տէր Սրապիոն աւագ քահանայ ։
Տէր Գրիգոր քահանայ Տէր Բարսեղեանց ։
Տէր Թադէոս քահանայ Խօջաէնիաթեանց ։

ԼԱԽՈԴԻԿԷ

Արժ. Զաքարիա վարդապետ Սափրիչեան ։
Տէր Մեսրոպ քահանայ Բերիացի ('ի Դէնէյ գիւղն) ։
Սափրիչեան Նշան աղա Պօլսեցի ։
Զաքար աղա Ճէռահ ('ի Պէյլէն) ։

ԽԱՐԲԵՐԴ

Արժ. Պետրոս վարդապետ Առաջնորդական փոխա ։
Սամուէլեան Յարութիւն աղա ։

ԿԱՐԻՆ

Գեր. Յարութիւն Արքեպիսկոպոս ։
Արժ. Մամբրէ վարդապետ ։
Տ. Բառնաբաս քահանայ 'ի Կրէճք ։
Տ. Կիւրեղ քահանայ Տ. Ալէքսանդրեան ։
Եղբէկեան Պետրոս աղա ։
Բարեհամբաւ ուսումնարանին Արծնեան ։
Գարագաշեան Յովհան աղա ։
Սիրունեան մահտեսի Փիլիպպոս աղա ։
Ենֆիէճեան Աւետիս աղա ։

Էնֆիէճեան Սարգիս էֆէնտի ։
Ճշմարտախօսեան մահտեսի Մկրտիչ աղա ։
Կարապետեան մահտեսի Յարութիւն աղա ։
Հաղարապետեան մահտեսի Աբրահամ աղա ։
Մահտեսի Կարապետեան Յարութիւն աղա ։
Մարգարեան Կարապետ աղա (լուսարար) ։
Մուշեղեան Յարութիւն էֆէնտի ։
Յակոբեան Գէորգ աղա ։
Յարութիւնեան Մկրտիչ աղա ։
Յարութիւնեան Յօհաննէս աղա ։
Յօհաննէսեան Սիմէօն աղա ։
Յօհաննէսեան Ստեփան աղա ։
Նշան աղա Երզնկացի (վարժապետ) ։
Չաթալպաշեան Յովակիմ աղա ։
Պօլատեան Մկրտիչ աղա ։
Պետրոս աղա Տիգրանակերտցի ։
Սարգիսեան Գառնիկ աղա դրաշար ։
Սրգոյեան Սարգիս աղա Վանեցի ։
Տէր Յովհաննէսեան Նշան էֆէնտի ։
Տ. Մելքիսեթեան մահտեսի Յօհաննէս աղա ։
Փանոսեան Խաչատուր աղա ։
Փանոսեան Կարապետ աղա ։

ԿԵՍԱՐԻԱ

Գեր. Կարապետ Սրբազան արքեպիսկոպոս Առաջնորդ Ս. Դանիէլ վանուց ։
Գեր. Եղիա Ծ. վարդապետ բարեխնամ Առաջնորդ ։
Թանգարանն Կեսարիոյ ։
Թանգարանն Կեռմիրու ։
Թաղական դպրոցի Արշակունեաց Ընկերութեան . նուէր Աշըգեան Յակոբ աղայէ ։

ԿԵՅՎԷ

Աղամեան Ղազարոս աղա ։
Գրիգոր աղա Պօղոսեան Վարդանեանց ։
Երամեանց Առաքել աղա ։
Երամեանց Յարութիւն աղա ։
Իլմասեան Գրիգոր աղա ։
Կըտրկըլեանց Յովհաննէս աղա Թորոսեան ։
Յովակիմեան Սարգիս աղա ։
Թըզունեան մահտեսի Ղուկաս աղա ։
Յովակ աղա Կիւռլեցի (վարժապետ) ։
Քէրպէճեան մահտեսի Յակոբ աղա ։

ԿԻՊՐՈՍ

Արժ. Ղուկաս վարդապետ ։
Դպրոցն Կիպրոսի ։
Մարտիրոսեան Յակոբ աղա ։
Մելիքեան Մելիքճան աղա ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ամեն. Տ. Տ. ՊՕՂՈՍ Սրբազան Պատրիարք (2 օրի.) ։
Գեր. Աբրահամ Արքեպիսկոպոս Շապանդարաշխարհեան ։
" Արիստակէս Եպիսկոպոս ։
" Գրիգոր Արքեպիսկոպոս Արաբկերու ։
" Մկրտիչ Արքեպիսկոպոս ։
" Յովհաննէս Արքեպիսկոպոս Պանտըրմայու ։
" Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան ։
" Նիկողոս Եպիսկոպոս Պօլսեցի ։
Արժ. Ալէքսան վարդապետ Քէնճեան ։
" Բարթողիմէոս վարդապետ Պէշիկթաշու ։
" Գարեգին վարդապետ Թօմթարեան ։
" Գրիգոր վարդապետ Աբգարեան ։
" Խորէն վարդապետ Գալֆայեան ։
" Կարապետ վարդապետ փոխ. Պատրիարքի ։
" Յակոբ վարդապետ Գատըգէօղիւղի ։
" Յովհաննէս վարդապետ Ալթեան ։
" Յովհաննէս վարդապետ Տիգրանակերտցի ։
" Պետրոս վարդապետ Պրուսացի ։
Տ. Արիստակէս քահանայ Գատըգէօղիւղի ։
Տ. Գրիգոր քահանայ Ըճէմեան ։
Տ. Գրիգոր քահանայ Պէշիկթաշու ։
Տ. Եղիշէ քահանայ Մայր եկեղեցւոյ ։
Տ. Մարուգէ քահանայ Քարակէօղիւղի ։
Տ. Սուքիաս քահանայ Մայր եկեղեցւոյ ։
Ալէմդարեանց Պետրոս աղա Պօղոսեան ։
Աղաթօն Գրիգոր էֆէնտի ։

ՑԱՆԿ

ՆՈՅԵՄԲԵՐ

Հովուոր և մարմնաւոր խնամութեանց պարտաւորութիւնքն և իրարու հետ ունեցած սերտ յարաբերութիւնքը 174
Տիգրանեան Անդրանիկ վարժարանին մէկ նամակը . . . 178
Զէյթունի դպրոցներուն եղած նուէրներն 179
ԿՐՕՆԱԿԱՆՔ. — Սամուէլ Ուոքրի և իւր գիրքը (շար.) 180
ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Առաքինի և քաղաքակիրթ պատանի, (շարունակութիւն) 185
Նորեկ ժառանգաւոր մի 187
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ. — Տեղւոյս կառավարիչ Նաիլֆ փաշային ի Յոպպէ: — Նորա և Ամերիկայի հիւպատոսին մէջ ծագած գժտութեան մի տարաձայնութիւն: — Շէյխ Տիապին պաշտօնի անցնիլը. — Պէրութի նահանգական ընդհանուր ժողովը . 187, 188
Նորատիպ մատեանք 188

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

Ա. Սիոնը ամեն ամիս կը հրատարակուի մէկ 16 երեսէ բաղկացեալ ութածալ թղթով.

Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիյէ հանդերձ ճանապարհի ծախքովը, կանխիկ վճարելի:

Գ. Զատ տետրակ առնել ուզողը, պէտք է ամէն մէկ տետրին երեք դահեկան վճարէ: